

նական գահուն պարապութենէն յառաջ պալիք անիշխանութեան գէմ հիա նալի նախադգուշութիւնք. ասոնք են ասա այն դաշնապրոյն քանի մը հան. գամանքներն՝ զոր մեղովք կէտ առ կէտ 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցայսօր կը գործադրեն։ Այս միշտաբո եգիպտա։

ցւոց համար թագաւորութեան խոր հրդեաւոր նշանք կը համարուէին. բայց մարդս քաջ քննելով՝ կը համազօւի որ եթէ մեղուայ ընկերութիւնն պետու թիւն մի է, կրնայ արժանապէս լսւազոյն հասարակապետութիւնն համարուիլ ։

Հ. Պ. ՔԱՅՏԱՆՃԱՆ :

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀ ԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատկերազարդեալ 200ի չափ գեղեցիկ տեսարաններով

ՅՕՐԻՆԵՑ Հ. ԴԱՆԻԷԼ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Մի հատորիկ երկոտասանաժալ. գինն է ֆռ. 1.50 :

ԱՅՏԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ. — Աշխարհագրութեան պէս քիչ ուսումն կայ փոփոխութեան ենթակայ. ըստ արտաքին երեւութիւն եւ ըստ քաղաքական անցից՝ հողագունտս չէ նոյն՝ ինչ որ էր հարիւր տարի առաջ : Ուր երբեք անկերգի առաջուտք կը ծածկէին ընդարձակ մակերևոյթ մը, այժմ երկու հանգիստակաց ծովաց բազուկներ իրարու ձեռն կարկառելով՝ զքաղաքականութիւն և զառաստու թիւն իրարու հետ կը փոխանակեն. երբեք հեթանոսութեան և բարբարոսութեան խաւարին մէջ խորիափող ժողովուրդք՝ այսօր աւետարանին լուսով պայծառացեալ՝ կ'աճին և կը զարգանան, և իրենց թառ անտառներն և հիւղերն՝ գեղեցկաշէն քաղաքաց և պալատաց տեղի կու տան : Ընդհակառակն՝ բարբեր ցամաքներ և ծաղկեալ քաղաքներ՝ բնութեան պատահանեալս զոչ կ'ընթան, 'ի գետաց և 'ի ծովէ ջրաղլղ լինելով, կամ երկրի զորքմանէն հիմնայատակուելով : Ուրիշ հողներ տէրութիւնք զինու զօրութեամբ իրենց սահմանները կ'ընդարձակեն, առանձնապէս Եւրոպայէ զուրս հնաւոր աշխարհաց մէջ :

Արդ, աշխարհագրութեան դասաւորութիւնը զանազան կաց ընդունելի լինելու համար, հարկ է որ յիշատակութեան առումս այս աննազգի անքերը :

Ի բաց թողլով այն ուսման վերաբերեալ զանազան թանկ հրատարակեալ ծանր և արդիւնաւոր գրութիւնք, ժամանակահան դպրոցական դասագիրք մը (Հ. Ստեփանոսի Վ. Երազմէան) լցու տեսեր էր, որ երկու ապագրութիւնէ յետոյ՝ օգտակարութիւնը մասամբ կորսնցուց, վերոյիշեալ պայմանաց չհամապատասխանելով :

Ուստի այս առժամանակայ պարապութիւնս լրացընելու գիտմամբ կը հրատարակենք առաջինայ գիւրատար և պատկերազարդ՝ դասագիրքից, հետեւելով ընդհանրապէս Առսար գաղղիացոյ աշխարհագրութեան պարզ ոճին, որոյ մինչև ցարդ 40՝ ապագրութիւնն՝ իւր յետին զօգնեան չէ : Ասկէ զատ առջ առջև ունեինք նաև Ե. Գոռլանպէտի, Ռ. Սիւրշիւսի և Աբխաբարեւելայ նոր գործերն : Այժմակարգական տեղեկութիւնք ընդհանրապէս ըստ վերջին հրատարակութեանց կոմիտէի գրուած են : Այսու հանդերձ կը խոստովանենք որ ամենամանր կրկնող մը կրնայ 'ի թուային մասին տեղ տարբերութիւն գտնել յօտարազգի դասագրոց, սակայն պէտք է դիտել՝ որ յայդմ մասին ոչ որ յաշխարհագրաց համանշան է ուրիշ մը հետ. մեք այնմ հետեւեցանք՝ որ աւելի հաւանական թուեցաւ :

Յուսալով որ այս փոքրիկ երկատիրութիւնս ուսումնասեր պատանեաց և անոնց ուսուցչաց ընդունելի անցի, կը խոստանանք՝ այժմէն 'ի նկատի առնել ամեն քաղաքական և բնական դեպք, որք որ ըստ օրէ կը հանդիպին. որպէս զի յերկրորդ ապագրութեան կարեւոր համարուած փոփոխութիւնները կատարենք :

Ի վերջ գրուելիս կը գնենք ցուցակ մը իւրաքանչիւր տէրութեան տարածութեան, բնակչաց, մայրաքաղաքաց և անոնց բնակչաց, գործոյս ապագրութեան ժամանակ եղած ամենամոր հրատարակութիւններէ քաղելով :

• Այս գրութեաց չափով մը ներկայութեան է ըմբերաց և շոյն ստանալ փոփոխաց համար՝ ներկայ Գրական կոչքի վրայ :